ՆԱԽԱԳԻԾ

«Հաստատված է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի 08.05.2019 թ. թիվ 5 նիստում:
Գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-մայոր
_____Մ.Ա.ԲԱԲԱՅԱՆ
<<____>>_____2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրում (այսուհետ՝ Կրթահամալիր) կրթական ծրագրերի մշակման կարգը կանոնակարգում է կրթական ծրագրերի մշակման ու հաստատման գործընթացը, գործընթացին ներկայացվող պահանջները և կիրառվող ընթացակարգերը:

2. Կրթական ծրագրերի մշակման ու հաստատման գործընթացը բաղկացած է հետևյալ երկու փուլերից՝

1) կրթական ծրագրի փաստաթղթային փաթեթի ստեղծում,

2) կրթական ծրագրի փորձաքննություն և հաստատում:

3. Կրթական ծրագրերի փորձաքննության և հաստատման գործընթացները Կրթահամալիրի կրթական ծրագրերի մշակման փուլում դրանց որակի ապահովման հիմնական մեխանիզմներն են:

II. Կրթական ծրագրի փաստաթղթային փաթեթի ստեղծում

4. Կրթահամալիրում կրթական ծրագրի մշակման համար հիմք են հանդիսանում.

1) Կրթահամալիրի զարգացման ռազմավարական գերակայությունները,

2) Պոտենցիալ աշխատաշուկայի և գործատուների (հատկապես ՀՀ ոստիկանության) պահանջներն ու կարիքները,

3) Կրթահամալիրում կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դասախոսական, նյութական, տեխնիկական, տեղեկատվական և այլ ռեսուրսների առկայությունը,

4) արտաքին՝ ազգային և միջազգային ծրագրային կողմորոշիչների (ՀՀ որակավորումների ազգային շրջանակի) և համապատասխան կրթական չափորոշիչների պահանջները տվյալ մասնագիտության համար:

5. Վերը նշված հիմքերի առկայության դեպքում կրթական ծրագրի փաստաթղթային փաթեթի կազմման համար ստեղծվում է 5 անդամից բաղկացած աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվում են փորձառու դասախոսներ՝ կրթական ծրագրի մասնագիտական ոլորտից, ինչպես նաև Կրթահամալիրի այլ ստորաբաժանումների աշխատակիցներ: Աշխատանքային խմբի կազմը և կրթական ծրագրի մշակման ժամանակացույցը հաստատվում է Կրթահամալիրի պետի հրամանով՝ Կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունքի ներկայացմամբ:

6. Աշխատանքային խումբը պատասխանատու է կրթական ծրագրի փաստաթղթային փաթեթի ստեղծման, ինչպես նաև կրթական ծրագրի փորձաքննության եզրակացության մեջ նշված առաջարկությունների կատարմանը հետամուտ լինելու համար:

7. Կրթական ծրագրի հաստատման համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը ներառում է.

1) կրթական ծրագրի մասնագիրը,

2) կրթական ծրագրի բաղկացուցիչ դասընթացների առարկայական նկարագրերը:

8. Կրթական ծրագրի մասնագիրը պարզաբանում է կրթական ծրագրի նպատակը, ակնկալվող կրթական վերջնարդյունքները, որոնք պետք է ձեռք բերի սովորողը կրթական ծրագրի ավարտին, ուսումնական պլանի քարտեզը, նկարագրում է ուսումնառության, դասավանդման և սովորողների գնահատման մեթոդները, ծրագրի շրջանավարտների ապագա կարիերայի և ուսումը շարունակելու հնարավորությունները և այլն:

9. Կրթական ծրագրի մասնագիրը առնվազն պետք է պարունակի՝

1) Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը, ՀՀ որակավորումների ազգային շրջանակի մակարդակը, շնորհվող որակավորումը, կրեդիտների քանակը, կրթական ծրագիրն իրականացնող Կրթահամալիրի համապատասխան ստորաբաժանման անվանումը, կրթական ծրագրի ուսուցման ձևը, ուսուցման լեզուն, լիցենզիայի համարը,

2) Կրթական ծրագրի հիմնավորումը, կրթական ծրագրի մշակման իրավական հիմքերը,

3) Կրթական ծրագրի նպատակները: Կրթական ծրագրի նպատակները, ընդհանուր առմամբ նկարագրում են տվյալ մասնագիտության կրթական ծրագրի գոյության անհրաժեշտությունը: Կրթական ծրագրի նպատակները պետք է լինեն հակիրճ, հստակ ձևակերպված և լինեն համահունչ Կրթահամալիրի առաքելությանը,

4) Կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքները: Կրթական վերջնարդյունքները ակնկալվող այն գիտելիքները, կարողությունները և հմտություններն են, որոնց ցույց են տալիս, թե կրթական ծրագրի ավարտին հատկապես ինչ պետք է գիտենա և կարողանա անել սովորողը: Կրթական ծրագրի վերջնարդյունքները պետք է ձևակերպված լինեն այնպես, որ Կրթահամալիրի շահակիցների համար հասկանալի լինի, թե այդ կրթական ծրագրի շրջանակներում ինչպիսի գիտելիքներով, կարողություններով, հմտություններով մասնագետ է պատրաստվում: Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձևակերպման համար պետք է հիմք ընդունել ՀՀ որակավորումների ազգային շրջանակը,

5) Կրթական ծրագրի ուսումնական պլանը: Կրթական ծրագրի ուսումնական պլանը ներկայացնում է կրթական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը,

6) Ուսումնական պլանի քարտեզը: Ուսումնական պլանի քարտեզը կապ է հաստատում կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքների և այն առարկաների (դասընթացների, ուսումնական մոդուլների) միջև, որոնց օգնությամբ այդ վերջնարդյունքները ձևավորվում են սովորողների մոտ:

7) Դասավանդման/ ուսումնառության մեթոդները: Դասավանդման մեթոդները պետք է.

ա. լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքներով ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը սովորողների կողմից,

բ. հաշվի առնեն սովորողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակները,

գ. խրախուսեն սովորողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ,

8) Կրթական վերջնարդյունքների գնահատման մեթոդները,

9) Կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը,

10) Շշրջանավարտների ապագա կարիերայի և կրթության հնարավորությունները,

11) Կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները,

12) Լրացուցիչ տեղեկատվություն կրթական ծրագրի վերաբերյալ, որը կարևոր նշանակություն ունի կրթական ծրագրի առանձնահատկությունները կամ հատուկ դերակատարությունն ընդգծելու համար (եթե այդպիսիք կան):

10. Կրթական ծրագրի փաստաթղթային փաթեթի ստեղծման աշխատանքներն ավարտելուց հետո՝ այն աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է Կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունք:

III. Կրթական ծրագրի փորձաքննությունը և հաստատումը

11. Կրթական ծրագրերի փորձաքննության և հաստատման գործընթացների նպատակն է գնահատել կրթական ծրագրի մշակման որակը և այն իրականացնելու՝ Կրթահամալիրի համապատասխան ստորաբաժանման կարողությունը:

12. Կրթական ծրագրի փորձաքննության իրականացման նպատակով ստեղծվում է փորձաքննական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով), որի ստեղծման և փորձաքննության կազմակերպման համար պատասխանատու է Կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունքը: Հանձնաժողովի կազմը որոշելիս հաշվի են առնվում կրթական ծրագրի բնույթը և նպատակները, մասնագիտական ոլորտը, հաձնաժողովի անդամների համապատասխան փորձը և այլ

հանգամանքներ, որոնք կարևոր են կրթական ծրագիրը օբյեկտիվ և համակողմանի գնահատելու համար:

13. Հանձնաժողովը պետք է բաղկացած լինի 5 անդամից, որոնցից առնվազն երկուսը արտաքին փորձագետներ են, իսկ մյուս երեքը (այդ թվում նախագահը)՝ Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ՝ կրթական ծրագրի մասնագիտական ոլորտից: Հանձնաժողովի կազմում ներգրավված արտաքին փորձագետներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

1) արտաքին փորձագետները պետք է լինեն կրթական ծրագրի մասնագիտական ոլորտի ներկայացուցիչներ և տիրապետեն այդ ոլորտի աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին,

2) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի փորձաքննության դեպքում արտաքին փորձագետները պետք է ունենան գիտական աստիճան և/ կամ գիտական կոչում,

3) միջին մասնագիտական կրթական ծրագրերի փորձաքննության դեպքում արտաքին փորձագետները պետք է առնվազն ունենան մագիստրոսի կրթական աստիճան,

4) արտաքին փորձագետներից մեկը պետք է ունենա կրթական ծրագրի մասնագիտական ոլորտում աշխատանքի առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ:

14. Փորձաքննության անաչառությունն ապահովելու նպատակով հանձնաժողովի ներքին փորձագետները չպետք է անմիջական առնչություն ունենան կրթական ծրագրի մշակման աշխատանքների հետ (չլինեն աշխատանքային խմբի անդամ):

15. Հանձնաժողովի քարտուղարը Կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունքի ներկայացուցիչն է, որը հանձնաժողովի անդամ չէ:

16. Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովին է ներկայացնում կրթական ծրագրի փաստաթղթային փաթեթը՝ կրթական ծրագրի քննարկման և գնահատման համար, որի ուսումնասիրության արդյունքում սահմանված ժամկետում կրթական ծրագրի մշակման որակի վերաբերյալ հանձնաժողովը եզրակացություն է կազմում, որը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

17. Եզրակացության մեջ հանձնաժողովը պարտավոր է.

1) գնահատել մշակված կրթական ծրագրի նպատակների, կրթական վերջնարդյունքների և ուսումնական պլանի բովանդակության համապատասխանությունը ՀՀ որակավորումների ազգային շրջանակի և համապատասխան կրթական չափորոշչի պահանջներին,

2) հավաստիանալ, որ կրթական ծրագրի մշակմանը, դրանց կառուցվածքին և բովանդակությանը վերաբերող Կրթահամալիրի ներքին իրավական ակտերում սահմանված պահանջները պահպանված են,

3) հավանություն տալ կրթական ծրագրի բաղկացուցիչ դասընթացների կազմին և բովանդակությանը, հավաստիանալ, որ դրանց կրթական վերջնարդյունքները համապատասխանում են կրթական ծրագրի վերջնարդյունքներին,

4) հավաստիանալ, որ կրթական վերջնարդյունքներն արտացոլում են աշխատաշուկայի կարիքներն ու պահանջները,

5) գնահատել կրթական ծրագրի իրականացման ռեսուրսային բազան:

18. Կրթական ծրագրի փորձաքննության եզրակացությունը կարող է լինել դրական, բացասական կամ պայմանական դրական: Պայմանական դրական եզրակացությունը կարող է ներառել ինչպես պահանջներ, որոնք աշխատանքային խումբը պետք է պարտադիր կատարի մինչև կրթական ծրագրի հաստատումը, այնպես էլ առաջարկություններ, որոնք ենթակա են կատարման Կրթահամալիրի այլ ստորաբաժանումների կողմից:

19. Աշխատանքային խմբի և Կրթահամալիրի համապատասխան ստորաբաժանումների կողմից փորձաքննության եզրակացության մեջ նշված պահանջների և առաջարկությունների կատարումից հետո կրթական ծրագիրը ներկայացվում է Կրթահամալիրի գիտական խորհրդի հաստատմանը:

IV. Անցումային դրույթ

20. Սույն կարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Կրթահամալիրի գիտական խորհրդի որոշմամբ: